Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Հաստատված՝

2013թ. հուլիսի **26**-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Բովանդակություն

Հայաստանի ժամագործության ոլորտի գնահատում 3

Ժամագործության համաշխարհային շուկա 13

Զարգացման հեռանկար 23

Հավելվածներ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ոլորտի ներկայիս բնութագիրը

Ոլորտի հիմնական ցուցանիշները	
Ընկերությունների քանակ, 2011թ.	5
Զբաղվածների քանակ, 2011թ.	113
Արտահանում (ժամացույցներ և ժամացույցի բաղադրիչներ), ԱՄՆ դոլ., 2011թ.	7,965,000
Արտահանման դինամիկա (տարեկան միջին աճ, ԱՄՆ դոլ.), 2001-2007թթ. (ճգնաժամի տարիներին էապես կրճատվել է արտահանումը միջինում կազմելով 2007թ. մոտ 1/3-ը)	37%
Արտահանման հիմնական շուկաներ, 2011թ.	
Ժամացույցներ	• ԱՄՆ – 85% • Ուզբեկստան - 7% • Թուրքմենստան – 3% • Այլ – 5%
Ժամացույցի բաղադրիչներ	Շվեյցարիա – 97%
Հիմնական արտադրողներ	• «Երևանի ոսկերչական գործարան -1 Գնոմոն» • AWI • «Այ-Ջի-Օու-Ար» • «Franck Muller»ի Հայաստանի ներկայացուցչություն

- Արտադրանք՝ թանկարժեք և ոչ թանկարժեք ժամացույցներ և ժամացույցի բաղադրիչներ
- Ոլորտի փոքրաթիվ մասնակիցներ՝ ժամացույց արտադրող 3 և ժամացույցի բաղադրիչներ արտադրող 1 ընկերություն (ևս մեկ ընկերություն գտնվում է ժամացույցների և ժամացույցի բաղադրիչների արտադրության մեկնարկային փուլում):
- Սփյուռքի նշանակալից ներգրավվածություն՝ կապիտալ ներդրումներ, ժամացույցի հայկական բրենդի ստեղծում (AWI), արտադրանքի միջազգային դիստրիբուցիա
- Շվեյցարական հանրահայտ Franck Muller բրենդի համար ժամացույցի բաղադրիչների արտապատվիրում
- Արտահանման բարձր կողմնորոշվածություն
- Արտահանման շուկաների բարձր կենտրոնացվածություն. ըստ արժեքային ծավալի՝ ԱՄՆ (ժամացույցներ) և Շվեյցարիա (ժամացույցի բաղադրիչներ)
- Ժամացույցների արտահանման մեջ թանկարժեք ժամացույցների բարձր կշիռ (արժեքային ծավալի ավելի քան 95%-ը)
- Նոր արտադրողի մուտք ոլորտ (հայ-շվեյցարական համատեղ արտադրության հիմնում)

Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), UN ComTrade առցանց տեղեկատվական բազա, ոլորտի մասնակիցների հետ քննարկումներ

Հայաստանի ժամագործության ոլորտի արտադրության արժեքը հետճգնաժամային փուլում վերականգնել է մինչճգնաժամային մակարդակը, սակայն չի հասել 2008թ.-ի պիկին:

Հայաստանի ժամացույցների արտադրություն, 1991-2011թթ.
հազար հատ



Աղբյուր՝ ԱՎԾ

- Հայաստանի ժամագործության ոլորտի պիկը եղել է 1980-ականներին, երբ տարեկան արտադրվում էր 4-5 միլիոն հատ ժամացույց: Հիմնական արտադրողներն էին Երևանի ժամացույցների գործարանը՝ կենցաղային ժամացույցներ և Երևանի գեղարվեստական ժամացույցների գործարանը՝ ձեռքի ժամացույցներ (այդ թվում՝ ոսկե):
- Արտադրանքն իրացվում էր ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ ողջ Խորհրդային Միությունում:
- Արտադրված ժամացույցների 98%-ից ավելին կազմել են զարթուցիչները: Ոսկե ժամացույցներ արտադրվել են տարեկան 30-70 հազ. հատ:

Հայաստանի ժամացույցների և ժամացույցի բաղադրիչների արտադրությունը արժեքային արտահայտությամբ*, 2001-2011թթ.,
հազ. ԱՄՆ դոլար



- Հայաստանի ժամագործության ոլորտի արտադրության արժեքը տատանվել է 2000-ականներին, արձանագրելով ավելի քան 5 մլն ԱՄՆ դոլ. պիկային 2008թ.-ին:
- Ավելի քան եռակի նվազելով 2009թ.-ին՝ 2010-2011թթ. ոլորտը արժեքային արտահայտությամբ վերականգնման միտում է դրսևորել, սակայն չի հասել 2008թ.-ի մակարդակին:

** ԱՎԾ-ի կողմից ներկայացված տվյալները որոշ ընկերությունների դեպքերում ներառում են արտադրանքի ամբողջ արժեքը, իսկ որոշ դեպքերում՝ (մասնավորապես՝ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով իրականացվող ժամացույցի բաղադրիչների արտադրության պարագայում) միայն մատուցված ծառայության արժեքը: Այս պատճառով՝ Հայաստանի ժամացույցների և ժամացույցի բաղադրիչների արտադրության վերը տրված արժեքային արտահայտությունը չի համընկնում Հայաստանի ժամագործության ոլորտի արտահանման արժեքի հետ, որը ներառում է արտադրանքի ամբողջ արժեքը:*

Աղբյուր՝ ԱՎԾ

Հայաստանի ժամագործության ոլորտը ֆրագմենտացված է, որտեղ տարբեր ենթահատվածներում գործում են փոքրաթիվ արտադրողներ:

Հայաստանի ժամագործության ոլորտի արտադրողներ

- **Թանկարժեք ժամացույց արտադրողներ**
  - «Երևանի ոսկերչական գործարան -1 Գնոմոն»
  - «Այ-Ջի-Օու-Ար»
  - «Կոպեդանզ» *(դեռևս արտադրության մեկնարկի փուլ)*
- **Ոչ թանկարժեք ժամացույց արտադրողներ**
  - AWI
- **Ժամացույցի բաղադրիչներ արտադրողներ**
  - «Franck Muller»ի Հայաստանի ներկայացուցչություն

Ոլորտի արտադրողներ

«Երևանի ոսկերչական գործարան -1 Գնոմոն»

- 2000-ականների երկրորդ կեսից սկսած գործարանն արտադրում է ոսկե ժամացույցներ (մեխանիզմը ներմուծվում է):
- Տարեկան արտադրվում է մի քանի հարյուր ժամացույց: Ներքին շուկան կազմում է սպառման մոտ 40%-ը՝ հիմնականում կիսաթանկարժեք ոսկեջրած ժամացույցներ: Կատարվում են նաև տեղական կորպորատիվ պատվերներ:
- Արտահանվում են մեծամասամբ ոսկե թանկարժեք ժամացույցներ, հիմնականում դեպի ԱՊՀ ավանդական շուկաներ (մասնավորապես՝ Ռուսաստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղազախստան) և ԱՄՆ:

AWI

- Ընկերությունը հիմնադրվել է 2001թ.-ին՝ սփյուռքահայ ներդրողի կողմից:
- Արտադրում է միջին գնային հատվածի ժամացույցներ (50-1,000 ԱՄՆ դոլ.) և որակով համադրելի է շվեյցարական Swatch-ին: Արտադրանքի մեխանիզմները ներմուծվում են (Շվեյցարիա, Ճապոնիա), դիզայնը նույնպես կատարվում է Շվեյցարիայում:
- Արտադրանքի մոտ մեկ երրորդը արտահանվում է, հիմնականում՝ Հունաստան, ԱՄՆ, ԱՄԷ:

«Այ-Ջի-Օու-Ար»

- Ընկերությունը «Այ-Ջի-Օու-Ար թրեյդինգ կորպորացիայի» հայկական մասնաճյուղն է և Հայաստանում ներգրավված է ոսկե ժամացույցների արտադրության մեջ:
- Ընկերությունը ժամացույցի բաղադրիչները հիմնականում ներմուծում է (Հոնկոնգ, Գերմանիա և այլն), սակայն որոշակի աշխատանքներ կատարվում են նաև Հայաստանում (օրինակ՝ ժամացույցի թափքի տաշում): Հայաստանում է կատարվում նաև ժամացույցների դիզայնը: Արտադրանքի տեսականին կազմում է ավելի քան 150 նմուշ:
- Ընկերության արտադրանքը գրեթե ամբողջությամբ արտահանվում է, հիմնականում՝ ԱՄՆ:

Ոլորտի արտադրողներ

«Կոպեդանզ»

- Ընկերությունը հիմնադրվել է շուրջ 1 տարի առաջ. առանձին մասնաճյուղեր գործում են Հայաստանում և Շվեյցարիայում:
- Ընկերությունը ներկայումս ժամացույցների արտադրության նախապատրաստական փուլում է և կատարում է կապիտալ ներդրումներ (մասնավորապես՝ սարքավորումների ներմուծում և տեղադրում):
- Ընկերությունը պատրաստվում է հանդես գալ արտադրանքի 2 հատվածով. առաջինը կլինի Շվեյցարիայում արտադրության վերջին փուլ անցած և հավաքված բարձր գնային հատվածի ժամացույցներ (“Swiss made”): Երկրորդ խմբի արտադրանքը կընդգրկի Շվեյցարիայում և այլ երկրներում (որոշ չափով նաև Հայաստանում) արտադրված բաղադրիչներով և Հայաստանում հավաքված միջին գնային հատվածի ժամացույցներ, որոնց թիրախային շուկաները կհանդիսանան ԱՊՀ և ասիական երկրները:

«Franck Muller»ի Հայաստանի ներկայացուցչություն

- Ընկերությունը ժամացույցի բաղադրիչներ է պատրաստում շվեյցարական Franck Muller-ի համար:
- Հիմնականում կատարվում են ժամացույցի թափքի մշակման, քարերով զարդարման, փորագրման աշխատանքներ: Պատրաստված բաղադրիչները ուղարկվում են Շվեյցարիա:

Ժամացույցների արտահանում

2000-ականներին Հայաստանից ժամացույցների արտահանման հիմնական շուկան եղել է ԱՄՆ-ը:

Ժամացույցների արտահանումը Հայաստանից հազ. հատ, հազ. ԱՄՆ դոլար, 2001-2011թթ.



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- 2000-ականներին Հայաստանից ժամացույցների արտահանումը քանակային և արժեքային արտահայտությամբ տատանվել է:
- Պիկային տարին եղել է 2007թ.-ը՝ ավելի քան 24,000 հատ ժամացույց շուրջ 4.2 մլն ԱՄՆ դոլ. արժեքով:
- Պիկից հետո՝ ճգնաժամային 2008-2010թթ. արժեքային արտահայտությամբ արտահանումը նվազել է, աճ արձանագրելով 2011թ.-ին և կազմելով մոտ 2.1 մլն ԱՄՆ դոլ.:
- Քանակային արտահայտությամբ արտահանումը 2011թ.-ին կազմել է շուրջ 9,000 ժամացույց, որը 2002-2011թթ. արձանագրված ամենացածր մակարդակն է:

Հայաստանից Ժամացույցների արտահանման կառուցվածքը ըստ երկրների, %, արժեքային արտահայտությամբ, 2001-2011թթ.,



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- 2000-ականների մեծ մասում Հայաստանի՝ ըստ երկրների արտահանման կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը պատկանել է ԱՄՆ-ին, որին 2011թ.-ին բաժին է ընկել Հայաստանի արտահանման ավելի քան 85%-ը:
- Տարբեր տարիներին Հայաստանի արտահանման մյուս հիմնական շուկաները հանդիսացել են Ռուսաստանը, Իսրայելը, Թուրքմենստանը, Շվեյցարիան:

Ժամացույցների արտահանում

Հայաստանից ժամացույցների արտահանման կառուցվածում գերակշռում են թանկարժեք ժամացույցները՝ արժեքային արտահայտությամբ ավելի քան 95%:

Թանկարժեք ժամացույցների արտահանումը Հայաստանից 2006-2011թթ., հազ. հատ, հազ. ԱՄՆ դոլար



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Հայաստանից ժամացույցների արտահանման կառուցվածքում գերակշռում են թանկարժեք ժամացույցները: Ոչ թանկարժեք ժամացույցների մասնաբաժինն աննշան է՝ կազմելով արտահանման արժեքային կառուցվածքի 3-5%:
- Թանկարժեք ժամացույցների հիմնական շուկան հանդիսանում է ԱՄՆ-ն:

Ոչ թանկարժեք ժամացույցների արտահանումը Հայաստանից 2006-2011թթ., հազ. հատ, հազ. ԱՄՆ դոլար



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Հայաստանի ժամագործության ոլորտի արտահանման պիկային 2007 թվականը այդպիսին է հանդիսացել նաև ոչ թանկարժեք ժամացույցների համար 2000-ականների երկրորդ կեսին՝ գրանցելով 225 հազ. ԱՄՆ դոլ.-ի արտահանում:
- Ոչ թանկարժեք ժամացույցների հատվածի արտահանման հիմնական շուկաներն են Հունաստանը, ԱՄՆ-ն և ԱՄԷ-ն:

Ժամացույցի բաղադրիչների արտահանում

Հայաստանում արտադրվող ժամացույցի թափքերը և այլ բաղադրիչներն ամբողջությամբ արտահանվում են հիմնականում Շվեյցարիա՝ շուրջ 90%:

Ժամացույցի թափքերի և այլ բաղադրիչ մասերի արտահանումը Հայաստանից, 2001-2011թթ.
հազ. ԱՄՆ դոլար



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Ժամացույցի թափքերի և այլ բաղադրիչ մասերի (բացի մեխանիզմից) Շվեյցարիա ներմուծման կառուցվածքը,
մասնաբաժին, %, 2001-2011թթ.



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Հայաստանում ժամացույցների բաղադրիչների արտադրությունն իրականացվում է հիմնականում շվեյցարական Franck Muller ընկերության ներկայացուցչության կողմից՝ հիմնադիր ընկերության պատվերների շրջանակում:
- Արտահանումը տատանվել է 2000-ականներին՝ պիկին հասնելով 2003թ.-ին (շուրջ 27.3 մլն ԱՄՆ դոլ.):
- Շվեյցարական ժամագործության մեջ ժամացույցի բաղադրիչների մի մասը, մասնավորապես՝ թափքերը արտապատվիրվում են այլ երկրներում. Շվեյցարիայի ժամագործության ոլորտի օրենսդրության համաձայն՝ ժամացույցի մեխանիզմի մասերի մինչև 40%-ը և ժամացույցի մյուս առանձին բաղադրիչներն ամբողջությամբ կարող են արտադրվել այլ երկրներում, սակայն ժամացույցը պետք է հավաքվի Շվեյցարիայում:
- Շվեյցարիա ժամացույցի բաղադրիչների* ներմուծման կեսից ավելին (2010թ.-ին 50%) բաժին է ընկել Չինաստանին:
- 2010թ.-ին Հայաստանից ներմուծումը կազմել է մոտ 0.2%-ը (Շվեյցարիա ժամացույցի բաղադրիչների ընդամենը ներմուծումը կազմել է 1,035 մլն ԱՄՆ դոլ.):

**Շվեյցարիայի ժամացույցի բաղադրիչների ներմուծման վերաբերյալ սույն քննարկումը չի ներառում ժամացույցի մեխանիզմը:*

Ոլորտի վերլուծության ամփոփում

Ուժեղ կողմեր

- Ժամացույցների արտադրության որոշ ավանդույթներ
- Franck Muller շվեյցարական ճանաչված ընկերության ներկայացուցչության գործունեություն Հայաստանում
- Միջին գնային հատվածի ժամացույցների կայացած արտադրություն և արտահանում (AWI)
- Առաջատար տեխնոլոգիաներով զինված Ժամացույցի թափքերի և այլ բաղադրիչների առկա արտադրություն (մասնավորապես՝ Շվեյցարիայի համար)
- Ժամացույցի բաղադրիչների Հայաստան ներմուծման վրա մաքսատուրք չի կիրառվում և ԱԱՀ-ը չի գանձվում սահմանին

Թույլ կողմեր

- Արտադրության երկիրը հանդիսանում է վճռորոշ գործոններից ժամացույցի գնորդների համար (Հայաստանը ժամագործության կենտրոն չի հանդիսանում և միջազգային ճանաչելիություն չունի)
- Տեղական արտադրության կախվածություն ժամացույցի բաղադրիչների (մասնավորապես՝ մեխանիզմի) ներմուծումից
- Ներքին շուկայում վաճառքի պարագայում տեղական արտադրության ոսկե ժամացույցների ամբողջ արժեքի վրա կիրառվում է ԱԱՀ, մինչդեռ ոսկու ներմուծումն ու վաճառքը Հայաստանում ազատված են ԱԱՀ-ից: Հաշվի առնելով որ ոսկին ժամացույցի ինքնարժեքի նշանակալից մասն է կազմում, սա զգալիորեն բարձրացնում է ժամացույցի վաճառքի վերջնական սպառման գինը:

Հնարավորություններ

- Շվեյցարական ժամացույցների բաղադրիչների 50%-ը կարող է արտադրվել Շվեյցարիայից դուրս (Հայաստանում արտադրելու հնարավորություն)
- Սփյուռքի ներուժ (ժամացույցների արտադրության բնագավառում Սփյուռքի գործարարներ)
- ԱՏԳ հիմնման նախաձեռնություն
- Զբոսաշրջության աճ Հայաստանում
- Հայաստանում արտադրված ժամացույցների ԱՊՀ շուկաներ արտահանման արտոնյալ պայմաններ
- Ժամագործության համաշխարհային ոլորտում սպառման կանխատեսվող շարունակական աճ (մասնավորապես՝ Արևելյան Ասիայի և Մերձավոր Արևելքի շուկաներում)

Վտանգներ

- Համաշխարհային ֆինանսա-տնտեսական նոր ճգնաժամ
- Համաշխարհային ոլորտում մրցակցության ուժեղացման և շահութաբերության մարժաների ավելի ու ավելի ցածր դառնալու միտում
- Ոսկու գնի հնարավոր աճի բացասական ազդեցություն ոսկուց պատրաստված ժամացույցների սպառման վրա
- Ժամացույցների սպառման համաշխարհային շուկաներում նորաձևության ավելի ու ավելի կարճատև ցիկլեր

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Ժամագործության համաշխարհային շուկա

Ժամագործության ոլորտի արժեշղթան

Նախագծում և դիզայն

Կատարվում է ժամացույցի մեխանիզմի, բաղադրիչների, ինչպես նաև արտաքին տեսքի և դիզայնի նախագծում

Մեխանիզմի և այլ բաղադրիչների պատրաստում/ ձեռք բերում

Ժամացույցի ամենակարևոր և կենտրոնական բաղադրիչը մեխանիզմն է:

Ոչ բոլոր ժամացույց արտադրողներն են պատրաստում մեխանիզմներ՝ գերադասելով արտապատվիրել:

Ժամացույցի մյուս բաղադրիչները նույնպես կարող են արտապատվիրվել:

Հիմնական արտադրողներ (մեխանիզմ)

- Ճապոնիա
- Չինաստան
- Շվեյցարիա

Հիմնական արտադրողներ (այլ բաղադրիչներ)

- Չինաստան
- Շվեյցարիա
- Իտալիա

Ժամացույցի հավաքում

Մեխանիզմը և բաղադրիչները հավաքվում են և պատրաստվում է ժամացույցը:

Հիմնական արտադրողներ և արտահանողներ

- Շվեյցարիա
- Չինաստան
- Գերմանիա
- Ֆրանսիա
- Սինգապուր

Մեծածախ վաճառք

Պատրաստի արտադրանքը իրացվում է մեծածախ կազմակերպություններին/ դիստրիբյուտորների ն:

Մանրածախ վաճառք

Մանրածախ վաճառքը իրականացվում է մասնագիտացված խանութների և առևտրի կենտրոնների միջոցով:

Ներմուծման և սպառման հիմնական շուկաներ

- Չինաստան
- ԱՄՆ
- Ֆրանսիա
- Ճապոնիա
- Գերմանիա

2000-2011թթ. ժամագործության ոլորտի համաշխարհային առևտուրը գրանցել է 10% միջին տարեկան աճ, ընդ որում՝ առավել արագ աճ է գրանցվել թանկարժեք ժամացույցների հատվածում:

Ժամագործության ոլորտի համաշխարհային առևտրի դինամիկա մլրդ ԱՄՆ դոլ., 1992-2011թթ.



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Ժամագործության համաշխարհային շուկան բավական արագ վերականգնվեց 2008թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո: Արդեն 2009թ.-ին ժամացույցների համաշխարհային առևտրի ծավալները գերազանցեցին նախաճգնաժամային ցուցանիշը:
- Ճգնաժամն առավել նկատելի ազդեցություն ունեցավ շքեղ ժամացույցների շուկայի վրա (մինչև 20% անկում), մինչդեռ էժան և միջին գնային հատվածի ժամացույցների վաճառքները գրեթե չտուժեցին:
- 2000-2011թթ. ժամագործության ոլորտի համաշխարհային առևտուրը գրանցել է 10% միջին տարեկան աճ:

Ժամագործության ոլորտի համաշխարհային առևտրի դինամիկան ըստ հիմնական ժամացույցների տեսակների արժեքային արտահայտությամբ, 1992-2011թթ.



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Ժամագործության համաշխարհային շուկայի շուրջ երկու երրորդը կազմում են ոչ թանկարժեք մետաղներից (հիմնականում՝ պողպատ) պատրաստված ժամացույցները:
- 1992-2011թթ. ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված ժամացույցների համաշխարհային առևտուրն աճել է տարեկան միջինում 8%, իսկ թանկարժեք մետաղից ժամացույցներինը՝ 10%:

Շվեյցարիային բաժին է ընկնում թանկարժեք մետաղից ժամացույցների համաշխարհային արտահանման 60%-ից ավելին:

Ժամացործության համաշխարհային ոլորտի հիմնական արտահանող երկրներ, 1992-2011թթ., մասնաբաժին, %



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Համաշխարհային ժամագործության ոլորտի առաջատար արտահանող երկիրը Շվեյցարիան է, որին 2011թ.-ին բաժին է ընկել ժամացույցների համաշխարհային արտահանման 46%-ը:
- Շվեյցարիային հաջորդում է Հոնկոնգը (2011թ.-ին համաշխարհային արտահանման ավելի քան մեկ քառորդը). Հոնկոնգի դիրքը համաշխարհային արտահանման մեջ պայմանավորված է այն հանգամանքով, որ Հոնկոնգը վերարտահանում է ներմուծված շվեյցարական ժամացույցներ, հիմնականում՝ Չինաստան:
- Ճապոնիան աստիճանաբար կորցնում է իր դիրքերը համաշխարհային արտահանման մեջ՝ 2011թ.-ին ունենալով ընդամենը 1% մասնաբաժին (2000թ.-ին՝ 5%):

Ժամացործության համաշխարհային ոլորտի հիմնական արտահանող երկրներ, ըստ ժամացույցների հիմնական տեսակների, 2011 թ. մասնաբաժին, տոկոս



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Շվեյցարիային բաժին է ընկնում թանկարժեք մետազից ժամացույցների համաշխարհային արտահանման 60%-ից ավելին:
- Ոչ թանկարժեք մետաղից ժամացույցների հատվածում Շվեյցարիայի մասնաբաժինը վերջին տասը տարիների ընթացքում աճել է՝ կազմելով 55% 2011թ.-ին:
- Ոչ թանկարժեք մետաղից ժամացույցների հատվածում 2000-ականներին աճել է Արևմտյան Եվրոպայի մասնաբաժինը, մինչդեռ Չինաստանինը՝ նվազել է:

Խոշոր ներմուծողներից Չինաստանը հանդիսանում է թանկարժեք մետաղից ժամացույցների ամենաարագ աճող շուկան:

Ժամացործության համաշխարհային ոլորտի հիմնական ներմուծող երկրներ, 1992-2011թթ., մասնաբաժին, %



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Ժամացործության համաշխարհային ոլորտի հիմնական ներմուծող երկրներ, ըստ ժամացույցների հիմնական տեսակների, 2011թ., մասնաբաժին, %



Աղբյուր՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Վերջին երկու տասնամյակներին Արևմտյան Եվրոպան (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա), ԱՄՆ և Հոնկոնգը հանդիսացել են համաշխարհային հիմնական ներմուծողները: 2011թ.-ին նրանց բաժին է ընկել համաշխարհային ներմուծման համապատասխանաբար 18%, 14% և 23% մասնաբաժին:
- Հոնկոնգ ներմուծված ժամացույցների մեծ մասը վերաարտահանվում են, հիմնականում՝ Չինաստան:
- Ներմուծման աճի միտում է դրսևորում Չինաստանը, որի մասնաբաժինը 1995թ.-ի 2%-ից հասել է 8%-ի՝ 2011թ.-ին:

- Թանկարժեք մետաղից ժամացույցների ներմուծման ծավալների ամենամեծ աճը 2000-ականներին ցույց են տվել Հոնկոնգը և Չինաստանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հոնկոնգ ներմուծված ժամացույցների մեծ մասը վերաարտահանվում է Չինաստան, կարելի է փաստել, որ խոշոր ներմուծողներից Չինաստանը հանդիսանում է թանկարժեք մետաղից ժամացույցների ամենաարագ աճող շուկան:
- 2000-ականներին ԱՄՆ-ի ներմուծման մասնաբաժինը կրճատվել է թե թանկարժեք, թե ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված ժամացույցների կտրվածքով:
- Նույն ժամանակահատվածում Արևմտյան Եվրոպայի մասնաբաժինը կրճատվել է թանկարժեք մետաղներից ժամացույցների հատվածում և աճել՝ ոչ թանկարժեք մետաղից պատրաստված ժամացույցների հատվածում:

Արժեքային բաշխվածություն

Շքեղ ժամացույցների հատվածին 2011թ.-ին պատկանել է ժամացույցների համաշխարհային շուկայի բնեղեն արտահայտությամբ 2%-ը, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 35%-ը:

Ժամացույցների համաշխարհային ներմուծման արժեքային բաշխվածությունն ըստ տարածաշրջանների, 2011թ. մասնաբաժին, %



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Ոլորտի աճի հիմնական շարժիչ ուժը ասիական տարածաշրջանում, մասնավորապես՝ Չինաստանում աճող պահանջարկն է (3.5% միջին տարեկան աճ):
- 2011թ.-ին ժամացույցների համաշխարհային ներմուծման 40%-ը բաժին է ընկել Ասիային, 30%-ը՝ Եվրոպային:
- Ասիական շուկայում հատկապես արագ է աճում պահանջարկը նորարար և նորաձև դիզայնով միջին գնային հատվածի ժամացույցների նկատմամբ:
- Ժամացույցի դիզայնը, բազմաբնույթ գործառույթների առկայությունը (օր, վայրկյանաչափ) և արտադրության երկիրը հանդիսանում են որոշիչ գործոնները գնորդների համար:

Շքեղ (1,000 ԱՄՆ դոլ.-ից բարձր արժեքով) և մասսայական ժամացույցների շուկայի հատվածներ, 2011թ. մասնաբաժին, %



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- 1,000 ԱՄՆ դոլ. և ավելի բարձր մանրածախ գին ունեցող ժամացույցները կազմում են շքեղ ժամացույցների հատվածը, որին 2011թ.-ին պատկանել է ժամացույցների համաշխարհային շուկայի բնեղեն արտահայտությամբ 2%-ը և արժեքային արտահայտությամբ 35%-ը:
- Մասսայական ժամացույցների հատվածը բաժանվում է երեք խմբի՝ էժան (մինչև 50 ԱՄՆ դոլ.), միջին (50-300 ԱՄՆ դոլ.) և միջինից բարձր (300-1,000 ԱՄՆ դոլ.):
- Բոլոր գնային հատվածներում էլ առկա են տարբեր գործառույթների և ժամանցների համար նախատեսված ժամացույցներ, այդ թվում՝ սպորտ, նորաձևություն, բիզնես և այլն:
- Ըստ ժամացույցների մեխանիզմի տեսակի, մեխանիկական ժամացույցները քանակապես գրեթե կրկնակի գերազանցում են էլեկտրոնային (կվարցային) ժամացույցներին: 2011թ.-ին շվեյցարական մեխանիկական ժամացույցների արտադրությունը 2010թ.-ի համեմատությամբ բնեղեն արտահայտությամբ աճել է մոտ 24%-ով, իսկ էլեկտրոնային ժամացույցներինը՝ 11%-ով:

Շվեյցարիայի ժամագործության ոլորտի արտահանում

Շվեյցարական ժամագործությունը շարունակվում է ընկալվել որպես աշխարհում շքեղ և որակյալ ժամացույցների առաջատար արտադրող:

Շվեյցարիայի ժամագործության ոլորտի արտահանման դինամիկան, 2005-2011թթ.
մլն. ԱՄՆ դոլ.



Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Ժամացույցների սպառման հիմնական տարածաշրջանների շուկաներում* Շվեյցարիայից ներմուծման մասնաբաժինը արժեքային արտահայտությամբ, %, 2011թ.



Նշում. վերոնշյալ տարածաշրջանների սպառման հիմնական շուկաներն են՝

- Արևելյան Ասիա – Չինաստան (ներառյալ Հոնգկոնգ), Ճապոնիա, Սինգապուր
- Արևմտյան Եվրոպա – Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա
- ԱՄՆ

Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Ժամացույցների արտադրության համաշխարհային առաջատարը շարունակում է մնալ Շվեյցարիան, որի արտադրանքի 90%-ից ավելին արտահանվում է:
- Արտահանման ծավալները, որոնք շարունակաբար աճում էին մինչճգնաժամային տարիներին, անկում արձանագրեցին 2009թ.-ին, սակայն 2011թ.-ին ավելի քան վերականգնվել էին:
- 2011թ.-ին Շվեյցարիային բաժին է ընկել ժամացույցների համաշխարհային արտահանման 57%-ը՝ շուրջ 21.7 մլրդ ԱՄՆ դոլ.: Շվեյցարիան գերակա դիրք ունի (50%-ից ավելի) ժամացույցների սպառման հիմնական տարածաշրջանների գրեթե բոլոր խոշոր շուկաներում:
- Վերջին մի քանի տասնամյակում Շվեյցարիայի ժամագործության ոլորտում առկա է ընկերությունների խոշորացման և ժամացույցների տարբեր բաղադրիչների արտադրության մեջ մասնագիտացման միտում:
- Ոլորտը կարգավորվում է մասնագիտական ասոցիացիաների և մասամբ՝ պետության կողմից:
- Շվեյցարական ժամագործության մեջ ժամացույցի բաղադրիչների մի մասը արտապատվիրվում են այլ երկրներում. Շվեյցարիայի ժամագործության ոլորտի օրենսդրության համաձայն՝ ժամացույցի մեխանիզմի մասերի մինչև 40% -ը և ժամացույցի մյուս առանձին բաղադրիչներն ամբողջությամբ կարող են արտադրվել այլ երկրներում: Սակայն, ժամացույցը պետք է փորձարկվի և ամբողջապես հավաքվի Շվեյցարիայում:
- Շվեյցարական ժամագործությունը շարունակվում է ընկալվել որպես աշխարհում շքեղ և որակյալ ժամացույցների առաջատար արտադրող և միտված է մնալ այդպիսին:

Ժամացույցի բաղադրիչների արտահանում

Ժամացույցի բաղադրիչների արտադրությունը կենտրոնացած է մի խումբ երկրներում՝ Չինաստանում և Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանում:

Ժամացույցների բաղադրիչների* համաշխարհային արտահանման դինամիկան, 1992-2011թթ.
մլն. ԱՄՆ դոլ.



**Չի ընդգրկում ժամացույցի մեխանիզմները:*
Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Ժամացույցների բաղադրիչների* համաշխարհային հիմնական արտահանողներ, 1995-2010թթ.**
մասնաբաժին, %



**Չի ընդգրկում ժամացույցի մեխանիզմները:*

*** Արևմտյան Եվրոպայի դիտարկված խոշոր արտահանողներն են Իտալիան, Ֆրանսիան, Ավստրիան, Գերմանիան և Պորտուգալիան: Չինաստանի ցուցանիշները ներառում են Հոնկոնգը: Այլ երկրների շարքում հիմնական արտահանողներն են Թաիլանդը, Ճապոնիան, Սինգապուրը, ԱՄՆ-ն, Մալայզիան, Վիետնամը:*

Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

- Ժամացույցների բաղադրիչների համաշխարհային արտահանումը 2000-2011թթ. աճել է տարեկան միջինում 6.8%-ով՝ 2011թ.-ին կազմելով շուրջ 3.2 մլրդ ԱՄՆ դոլ.:
- Համաշխարհային արտահանումը անկում է արձանագրել միայն ճգնաժամային 2009թ.-ին, որին հաջորդել է արագ վերականգնումը:
- Չինաստանը ավանդաբար հանդիսանում է ժամացույցի բաղադրիչների խոշորագույն արտահանողը, որին հաջորդում է Շվեյցարիան:
- Վերջին 15 տարիներին բաղադրիչների արտահանումը ավելի է կենտրոնացել մի քանի տարածաշրջաններում՝ հիմնականում Չինաստանում և Արևմտյան Եվրոպայի մի խումբ երկրներում:
- Չինաստանից բացի, զարգացող երկրների շարքում ժամացույցի բաղադրիչների արտահանման առաջատարը Թաիլանդն է՝ 2011թ.-ին 2.5% մասնաբաժնով:

Նշում. Ժամացույցների մեխանիզմների համաշխարհային արտահանումը չի դիտարկվել: Ըստ Հայաստանի ժամագործության ոլորտի զարգացման ռազմավարության մոտակա տարիներին Հայաստանից ժամացույցների մեխանիզմների արտահանում չի կանխատեսվում:

Ժամացույցի բաղադրիչների ներմուծում

Շվեյցարիան ավանդաբար հանդիսանում է ժամացույցի բաղադրիչների խոշորագույն ներմուծողը:

Ժամացույցների բաղադրիչների* համաշխարհային հիմնական ներմուծողներ, 1995-2010թթ. մասնաբաժին, %**



- Շվեյցարիան ավանդաբար հանդիսանում է ժամացույցի բաղադրիչների խոշորագույն ներմուծողը, որին հաջորդում է Չինաստանը:
- Վերջին 15 տարիներին բաղադրիչների ներմուծումը ավելի է կենտրոնացել մի քանի տարածաշրջաններում՝ հիմնականում Շվեյցարիայում, Չինաստանում և Արևմտյան Եվրոպայի մի խումբ երկրներում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և Մեծ Բրիտանիա:
- Համաշխարհային ընդամենը ներմուծման մեջ Շվեյցարիայի մասնաբաժինը աճել է 1995թ.-ին 31%-ից 43% 2010թ.-ին:
- Չինաստանից բացի, զարգացող երկրների շարքում ժամացույցի բաղադրիչների ներմուծման առաջատարները Բրազիլիան և Թաիլանդն են՝ 2010թ.-ին համապատասխանաբար 3.3% և 1.9% մասնաբաժնով:

Ներառում է ժամացույցի թափքերը, շղթաները, գոտիները և դրանց բաղադրիչները: Չի ընդգրկում ժամացույցի մեխանիզմները:

*** Արևմտյան Եվրոպայի դիտարկված խոշոր արտահանողներն են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և Մեծ Բրիտանիան: Չինաստանի ցուցանիշները ներառում են Հոնկոնգը:*

Նշում. Ժամացույցների մեխանիզմների համաշխարհային ներմուծումը չի դիտարկվել: Ըստ Հայաստանի ժամագործության ոլորտի զարգացման ռազմավարության մոտակա տարիներին Հայաստանում ժամացույցների մեխանիզմների արտադրություն և արտահանում չի կանխատեսվում:

Աղբյուր՝ UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Գլոբալ միտումների ամփոփում

1. Կանխատեսվում է, որ առաջիկա տասնամյակում ժամագործության համաշխարհային ոլորտը կաճի տարեկան միջինում 8-10%-ով (արժեքային արտահայտությամբ):

2. Կանխատեսվում է, որ և թանկարժեք և ոչ թանկարժեք ժամացույցների արտադրության մեջ Արևմտյան Եվրոպայի մասնաբաժինը կաճի ավելի արագ, քան՝ Ասիայի:

3.
   - Եվրոպայի և ԱՄՆ-ի մասնաբաժինը կաճի ոչ թանկարժեք ժամացույցների սպառման հատվածում:
   - Ասիայի մասնաբաժինը կաճի թանկարժեք ժամացույցների սպառման հատվածում (պայմանավորված մասնավորապես Չինաստանում կենսամակարդակի աճով):

4. Ժամացույցների և՛ արևմտյան, և՛ ասիական սպառման շուկաներում նորաձևության ցիկլերը միտված են դառնալու ավելի ու ավելի կարճատև:

5. Շվեյցարական ժամագործությունը կշարունակի պահպանել մենաշնորհը թանկարժեք ժամացույցների հատվածում:

6. Համաշխարհային ընկերությունների կողմից կշարունակվի տարբեր երկրներում արտադրության (և ժամացույցների և բաղադրիչների) առկա շահավետ պայմանների դիտարկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Հայաստանում ժամագործության զարգացման հիմքեր

Ժամագործությունը՝ հատկապես ձեռքի ժամացույցների արտադրությունը, չի հանդիսացել Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերից և չի հիմնվել Հայաստանի յուրահատուկ մրցակցային առավելությունների վրա:

Ժամագործության ոլորտում վերջին տասնամյակի զարգացումները հիմնվել են երկու հիմնական գործոնների վրա.

- Սփյուռքահայերի ներգրավվածությունը ժամագործության բնագավառում և նրանց անհատական բիզնես նախաձեռնությունները Հայաստանում
- Ոսկեգործության ոլորտում արտադրանքի տեսականու ընդլայնումը՝ ներգրավվելով թանկարժեք մետաղներով ժամացույցների արտադրության բնագավառում

Ժամագործության զարգացման միջազգային փորձ

- Որևէ երկիր, բացառությամբ Շվեյցարիայի, չի իրականացրել հատուկ քաղաքականություն ոլորտի զարգացման ուղղությամբ:
- Ժամագործության «ոչ ավանդական» երկրներում ժամացույցների կամ բաղադրիչների արտադրության հիմնումը պայմանավորված է եղել հիմնականում առաջատար ժամագործական ընկերությունների ներդրումներով կամ պատվերներով (Սինգապուր, Թաիլանդ, Մալայզիա):

Հայաստանում ժամագործության զարգացման հեռանկար

Հայաստանում ժամագործության զարգացումը առավելապես կախված կլինի առկա բիզնես նախագծերի և սփյուռքի միջոցով նոր գլոբալ ընկերությունների ներգրավման հաջողությունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ժամագործության ոլորտի համար մշակվել են զարգացման հեռանկարին օժանդակող նախաձեռնություններ (ի տարբերություն համալիր ռազմավարության):

Այս համատեքստում կառավարության դերը առավելապես կկայանա առկա և նոր մասնավոր նախաձեռնություններին օժանդակության մեջ՝ նպաստելով դրանց հաջողության հավանականության բարձրացմանը:

Ժամացույցների արտադրություն

- Սեփական բրենդով ժամացույցների արտադրությունը ենթադրում է երկարաժամկետ ներդրումներ և փորձառություն այս ոլորտում:
- Նոր բիզնես նախաձեռնություններ հնարավոր են միայն այս ոլորտում միջազգային փորձառություն և կապեր ունեցող սփյուռքի անհատների կողմից, որոնց թիվը շատ սահմանափակ է:
- «AWI», «Գնոմոն» և ներկայիս այլ տեղական բրենդերի միջազգային շուկաներում հաջողությունը, այն է՝ Հայաստանում արտադրված ժամացույցի դրական համբավի ձևավորումը, կարող է լուրջ հիմքեր ստեղծել հայկական բրենդով ժամացույցների զարգացման համար: Սակայն, այն երկարատև գործընթաց է և կարող է տևել մինչև 7-10 տարի:
- Հայաստանում արտադրված ժամացույցների միջազգային շուկաներում հաջողության գրավական կարող է լինել հատկապես շվեյցարական մեխանիզմների օգտագործումը (արտադրանքի վրա “swiss movement” մակնշում) և/կամ շվեյցարական որևէ ընկերության հետ փոխկապվածությունը:
- Նմանատիպ զարգացման նախադեպ է Սինգապուրի և Իսրայելի ժամագործության ոլորտը:

Ժամացույցների բաղադրիչների արտադրություն

- Նոր ընկերությունների մուտքը պայմանավորված է զգալի կապիտալ ներդրումների հետ և հիմնական ժամացույց արտադրող ընկերությունների հետ սերտ կապերով:
- Միջինժամկետ հեռանկարում առավել հավանական է արտադրանքի աճն առկա ընկերությունների հզորությունների առավել ինտենսիվ օգտագործման շնորհիվ՝ ի հաշիվ նոր պատվերների:
- Հաշվի առնելով Սփյուռքի կապերը, համադրելի արտադրական ծախսերի մակարդակը, հարկային և մաքսային արտոնությունների համակարգը՝ ներառյալ Հայաստանում ստեղծվելիք ԱՏԳ-ները, բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել ևս մի քանի ընկերությունների արտադրությունների ներգրավման համար:
- Համադրելի զարգացման ուղի են ունեցել Թաիլանդը և Մալայզիան:

Հայաստանի ժամագործության ոլորտի զարգացման հնարավորություններն առավել հավանական են միջազգային միջինից բարձր գնային հատվածի ժամացույցների բրենդերի արտադրությունների ներգրավման և արտապատվիրման հարթության վրա:

Ժամագործության համաշխարհային ոլորտի մասնակից հիմնական երկրների հակիրճ նկարագիր*

Երկիր	Ժամագործության ոլորտի հակիրճ նկարագիր
Շվեյցարիա	Բարձրակարգ թանկարժեք ժամացույցների բրենդերի համաշխարհային անվիճելի առաջատար
Ֆրանսիա, Իտալիա	Բարձրակարգ ժամացույցերի արտադրություն, միջազգային շուկայում հանրաճանաչ բրենդեր
Սինգապուր	Բարձրորակ ժամացույցների արտադրություն միջինից բարձր գնային հատվածում. հիմնականում օտարերկրյա հանրաճանաչ բրենդերի մասնաճյուղեր կամ նրանց կողմից արտապատվիրում
Գերմանիա, ԱՄՆ	Բարձրորակ մասսայական արտադրություն միջին գնային հատվածում, տեղական բրենդերի առկայություն
Ճապոնիա	Բարձրորակ մասսայական արտադրություն միջինից ցածր գնային հատվածում
Չինաստան, Թաիլանդ	Ցածրորակ մասսայական արտադրություն՝ նվազագույն գներով, այլ երկրների բրենդերի Ժամացույցի բաղադրիչների արտապատվիրում
Մալայզիա	Այլ երկրների բրենդերի Ժամացույցի բաղադրիչների արտապատվիրում
Իսրայել	Թանկարժեք ժամացույցների տեղական մի քանի բրենդեր

**Երկրների մանրամասն դասակարգումն ըստ մի քանի չափանիշների տրված է Հավելվածներում:*

Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի ժամագործության ոլորտի զարգացման առավել հավանական ուղղություններից են միջազգային բրենդերի արտադրությունների և արտապատվիրման պրակտիկայի ներգրավումը: Սա պայմանավորված է նրանով, որ Հայաստանը չի կարող մրցել ժամացույցի էժան և մասսայական արտադրողների հետ:

Ոլորտի փոխկապակցվածություններ և փոխազդեցություն

Հայաստանի ժամագործության ոլորտը փոխկապակցված է տնտեսության գերակա մի քանի հատվածների հետ՝ ապահովելով որոշակի փոխազդեցություններ միմյանց վրա:



- Ոլորտների առաջմղման և երկրի բրենդինգի ընդհանրություններ (օրինակ՝ ոսկեգործության և ժամագործության միասնական ցուցահանդեսներ)
- Ընդգրկվածություն միասնական արժեշղթայում և ընդհանրություններ արժեշղթայի որոշ հատվածներում (օրինակ՝ հումք – ոսկի, թանկարժեք քարեր)
- Սփյուռքի ներգրավվածություն բոլոր երեք ոլորտներում

- Զբոսաշրջությունը Հայաստանում արտադրված ժամացույցների պահանջարկի կարևոր աղբյուրներից է:
- Ժամագործության զարգացման (տեղական և Հայաստանում արտադրված օտարերկրյա բրենդային ժամացույցներ, անմաքս առևտրի գոտի) արդյունքում ոլորտը կարող է ապահովել զբոսաշրջիկներից ստացված եկամտի աճ և Հայաստանում զբոսաշրջության արժեքային առաջարկի դիվերսիֆիկացիա:

Հնարավոր աճի աղբյուրներ

Հայաստանի ժամագործության ոլորտի հնարավոր զարգացումը ենթադրում է աճի երկու հիմնական աղբյուր՝ ուղղված արտահանմանը:

1 Օտարերկրյա ընկերությունների ժամացույցների կամ բաղադրիչների արտադրությունների կամ պատվերների ներգրավում

- Սփյուռքի ժամագործական ընկերությունների ժամացույցների և ժամացույցի բաղադրիչների արտադրությունների/ պատվերների ներգրավում
- Ժամագործության ոլորտում գլոբալ ընկերությունների ներգրավում
- Հիմնական թիրախ երկրներ՝ Արևմտյան Եվրոպա (մասնավորապես՝ Շվեյցարիա), ԱՄՆ

2 Տեղական ընկերությունների արտահանման աճ

Ոսկեգործական ժամացույցներ արտադրող ընկերություններ*

Ոչ ոսկեգործական ժամացույցներ արտադրող ընկերություններ

- Արտահանման խթանում ավանդական (ԱՄՆ, Ռուսաստան, Հունաստան, ԱՄԷ և այլն) շուկաներ
- Մուտք այլ գրավիչ (Մերձավոր Արևելք, Եվրոպա) և հատկապես՝ արտոնյալ պայմանների առկայության (ԱՊՀ երկրներ) շուկաներ

**Այս հատվածի ընկերությունների արտադրանքը դիրքավորվում է նաև որպես ոսկեգործական արտադրանք և կարող է սերտ փոխազդեցության մեջ մտնել Հայաստանի ոսկեգործության ոլորտի զարգացման հետ:*

Օտարերկրյա նոր ընկերությունների ներգրավում

- Սփյուռքում ժամագործության ոլորտում կայացած ընկերություններ, որոնք կարող են արտապատվիրել/ արտադրություն հիմնել Հայաստանում (Շվեյցարիա)
- Արտադրական ծախսերի մրցակցային մակարդակ համեմատած հիմնական ժամագործական արտադրանքի հիմնական արտապատվիրման երկրների հետ*

Ժամագործության ոլորտի արտադրական աշխատուժի միջին վարձատրության համեմատություն (2011թ.).

Մալայզիա – 5.1 ԱՄՆ դոլ./ժամ
Չինաստան – 3.5 ԱՄՆ դոլ./ժամ
Հայաստան – 1.4 ԱՄՆ դոլ./ժամ

Աղբյուր՝ J. P. Morgan, CEIC, Աշխատուժի Միջազգային Կազմակերպություն, Հայաստանի ժամագործության ոլորտի մասնակիցների հետ քննարկումներ

- Հայաստանից ժամացույցների ԱՊՀ արտահանման արտոնյալ պայմաններ (ազատ առևտրի գոտի)
- ԱՏԳ – բացի «Զվարթնոց» օդանավակայանին կից ստեղծվելիք ԱՏԳ-ից ժամացույցների արտադրությունը կարող է իրականացվել «ՌԱՕ Մարս» ընկերության տարածքում ստեղծվող ԱՏԳ-ում որպես ճարտարագիտության ենթաճյուղ, ինչպես նաև այլ առկա ԱՏԳ-ներում:
- Բարենպաստ մաքսային ռեժիմ ժամացույցների բաղադրիչների ներմուծման և արտահանման համար (մաքսատուրքի բացակայություն, ԱԱՀ հաշվարկումը և գանձումը չի կատարվում մաքսային սահմանի վրա)
- Հայաստանում արդեն գործող ընկերություններ կարող են դրական փորձառության օրինակներ ծառայել

Տեղական ընկերությունների արտահանում

Առկա կարողություններ/հնարավորություններ

- Բարենպաստ օրենսդրություն. Ժամացույցի բաղադրիչների Հայաստան ներմուծումն ազատված է մաքսատուրքից
- Սփյուռքի ներուժ
- ԱՊՀ շուկաներ արտահանման արտոնյալ պայմաններ
- Միջին գնային հատվածի ժամացույցների կայացած արտադրություն և արտահանում (AWI)
- Փոխկապակցվածություն և փոխազդեցություն ոսկեգործության ոլորտի հետ (ոսկեգործական ժամացույցների մասով)
- Հայաստանում զբոսաշրջության զարգացում

Կրիտիկական բացեր

- Արտադրության երկիրը հանդիսանում է վճռորոշ գործոններից ժամացույցի գնորդների համար (Հայաստանը ժամագործության կենտրոն չի հանդիսանում և միջազգային ճանաչելիություն չունի)
- Ոլորտի որոշ ընկերությունների շուկայավարման և ոլորտի ներքին և արտաքին առաջմղման անբավարար մակարդակ
- Ընկերությունների կապիտալ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման խնդիրներ
- Ներքին շուկայում վաճառքի պարագայում տեղական արտադրության ոսկե ժամացույցների ամբողջ արժեքի վրա կիրառվում է ԱԱՀ, մինչդեռ ոսկու ներմուծումն ու վաճառքը Հայաստանում ազատված են ԱԱՀ-ից: Հաշվի առնելով որ ոսկին ժամացույցի ինքնարժեքի նշանակալից մասն է կազմում, սա զգալիորեն բարձրացնում է ժամացույցի վաճառքի վերջնական սպառման գինը:
- Մասնագիտական հմուտ աշխատուժի բաց՝ ոլորտի աճի պարագայում

Զարգացման հեռանկարին օժանդակող նախաձեռնություններ

- Ոլորտի առաջմղում (մասնակցություն ոլորտային ցուցահանդեսների, ընկերությունների բրենդերի զարգացում)

- Ոլորտի առաջմղում միջազգային թիրախային շուկաներում
- Տեղական արտադրության խթանում
  - Օրենսդրական բարեփոխումներ
  - Տեղական ընկերություններին ֆինանսական աջակցություն
- Ժամագործության ոլորտում կարճաժամկետ ուսումնական ծրագրերի իրականացում, մասնավորապես, օտարերկրյա մասնագետների ներգրավմամբ

Օտարերկրյա ընկերությունների ներգրավում

Զարգացման հեռանկարին օժանդակող նախաձեռնություններ	*Հղում Հայաստանի ոսկեգործության զարգացման ռազմավարության համապատասխան նախաձեռնությանը*
1 **Ոլորտի առաջմղում** • Առաջնային նպատակային շուկաներում ոլորտային միջազգային ցուցահանդեսներին տեղական ընկերությունների մասնակցություն (հիմնականում՝ ոսկեգործական ժամացույցների մասով) • Հայաստանում ժամագործության ոլորտը ներգրավելու պոտենցիալ ունեցող ցուցահանդեսներին օտարերկրյա ընկերությունների մասնակցություն (հիմնականում՝ ոսկեգործական ժամացույցների մասով)	*6-րդ ռազմավարական նախաձեռնություն*
2 • Ոսկեգործության, աղամանդագործության և ժամագործության ԱՏԳ-ի հիմնում • Ոսկեգործության և ժամագործության ոլորտներում Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում	*7-րդ ռազմավարական նախաձեռնություն*
3 Աշխատուժի վերապատրաստման աջակցություն՝ պետության կողմից	*4-րդ ռազմավարական նախաձեռնություն*

Տեղական ընկերությունների արտահանում

Զարգացման հեռանկարին օժանդակող նախաձեռնություններ	*Հղում Հայաստանի ոսկեգործության զարգացման ռազմավարության համապատասխան նախաձեռնությանը*
1 **Ոլորտի առաջմղում** • Առաջնային նպատակային շուկաներում ցուցահանդեսների մասնակցության աջակցություն • Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի կազմակերպում և միջազգային ճանաչելիության ապահովման աջակցություն • Առաջմղման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում • Միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով ոլորտի առաջմղում	*6-րդ ռազմավարական նախաձեռնություն*
2 **Օրենսդրական բարեփոխումներ** Տեղական արտադրության ոսկե ժամացույցների ներքին շուկայում վաճառքի ԱԱՀ-ի հարկման նոր մոտեցում (ոսկերչական ոլորտում առաջարկվող հարկման մոտեցման կիրառում)	*1-ին ռազմավարական նախաձեռնություն*
3 **Ֆինանսական աջակցություն** • Տեղական ընկերությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորում	*5-րդ ռազմավարական նախաձեռնություն*
4 Աշխատուժի վերապատրաստման աջակցություն՝ պետության կողմից	*4-րդ ռազմավարական նախաձեռնություն*

Ոլորտի զարգացման պարագայում Հայաստանի արտահանման ծավալները 2013-2020թթ. Ժամանակահատվածում կարող են ավելի քան եռապատկվել:

Հայաստանի ժամագործության ոլորտի արտահանման հնարավոր ծավալներ (ոլորտի աճի պարագայում)

մլն. ԱՄՆ դոլ., 2015 և 2020թթ.



Նշումներ.

Հայաստանի ժամագործության ոլորտի արտահանման հնարավոր ծավալների մոտարկման հենք

- Հայաստանում ժամագործության ոլորտի արտահանման ներկայիս ծավալներ և պատմական կատարողական
- Համադրելի երկրների պատմական կատարողական

Հայաստանի ժամագործության ոլորտի 2020թ. արտահանման հնարավոր ծավալների միջերկրային համադրություն*

Երկիր	2020թ. կանխատեսում (Հայաստան, մլն ԱՄՆ դոլ.)	Համադրելի պատմական կատարողական (մլն ԱՄՆ դոլ., դիրքը համաշխարհային արտահանման մեջ)	2011թ. կատարողական (մլն ԱՄՆ դոլ., դիրքը համաշխարհային արտահանման մեջ)
Հայաստան	28		7.97 (43-րդ)
Համադրելի պատմական կատարողականով երկիր			
Մալայզիա		29.1 (1992թ., 17-րդ)	64.2 (21-րդ)
Իսրայել		27.4 (2007թ., 30-րդ)	47.5 (22-րդ)

**Համադրելի երկրների ժամագործության ոլորտների պատմական կատարողականի տվյալները չեն ներառում ժամացույցի մեխանիզմների արտահանումը (Հայաստանը ժամացույցի մեխանիզմներ կամ դրանց բաղադրիչներ չի արտահանում):*

Աղբյուր (պատմական տվյալների) ՝UN ComTrade առցանց տեղեկատվական բազա

Զարգացման հեռանկար	Ոլորտի հնարավոր զարգացման պարագայում ակնկալվող արդյունքներ
Արտադրողներ	**Տեղական արտադրողներ** • Սեփական բրենդով հանդես եկող ընկերությունների խոշորացում • Ներքին և արտահանման շուկաներում վաճառքների աճ • Նոր ընկերությունների ստեղծում • 1-2 բրենդի կայացում միջազգային մասշտաբով • Նպատակային շուկաների առավել լավ իմացություն և արտահանման զարգացած կարողություններ (կապեր նպատակային շուկաների գնորդների հետ, արտահանման շուկաներում աշխատելու փորձառություն) **Օտարերկրյա ընկերություններ** • Հայաստանի ժամագործության ոլորտում ներգրավված օտարերկրյա ընկերությունների քանակի աճ (մասնավորապես՝ ԱՏԳ-ում)
Արտադրանք	• Թանկարժեք և ոչ թանկարժեք ժամացույցներ • Ժամացույցի բաղադրիչներ (երկարատև հեռանկարում հնարավոր է նաև տեղական ընկերությունների կողմից սեփական կարիքների համար բաղադրիչների արտադրություն) • Ինքնարժեքի գնային մրցունակություն և արտադրանքի որակի ապահովում • Հայաստանում արտադրված ժամացույցների և ժամացույցի բաղադրիչների միջազգային ճանաչելիության աստիճանական աճ
Աշխատուժ	• Մասնագիտական որակյալ աշխատուժի (մասնավորապես՝ վերապատրաստված արտերկրում կամ արտերկրյա ընկերությունների կողմից) աճող առկայություն
Շուկաներ	• Հայաստանի ժամագործության ոլորտի արտահանման պատմական և ներկայիս շուկաներում արտահանման ծավալների առաջանցիկ աճ • Մուտք նոր գրավիչ և հասանելի արտահանման շուկաներ և արտահանման դինամիկ աճող ծավալներ • Հայաստանում արտադրված ժամացույցների գնումների աճ տեղական ազգաբնակչության և զբոսաշրջիկների կողմից

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ժամագործության համաշխարհային ոլորտի մասնակից հիմնական երկրների հակիրճ նկարագիր

Երկիր	Դասակարգում Ժամագործության համաշխարհային ոլորտում							
	Գին (ժամացույց)	Որակ (ժամացույց)	Տեղական բրենդեր		Արտապատվիրում, մասշտաբ		Բաղադրիչների արտադրություն, ծավալ	
			Առկայություն	Համաշխարհային համբավ	(պատվիրատու)	(պատվեր իրականացնող)	Մեխանիզմ	Այլ բաղադրիչներ
Շվեյցարիա	Ամենաբարձր	Ամենաբարձր	Ամենաբարձր	Ամենաբարձր	Բարձր	Ցածր	Բարձր	Բարձր
Ֆրանսիա	Բարձր	Բարձր	Բարձր	Բարձր	Միջինից բարձր	Միջինից բարձր	Միջին	Բարձր
Իտալիա	Բարձր	Բարձր	Բարձր	Բարձր	Միջինից բարձր	Միջինից բարձր	Ցածր	Բարձր
Սինգապուր	Միջինից բարձր	Միջինից բարձր	Միջինից ցածր	Ցածր	Ցածր	Բարձր	Միջինից բարձր	Բարձր
Գերմանիա	Միջին	Միջինից բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջին	Միջին	Ցածր	Միջին
ԱՄՆ	Միջին	Միջինից բարձր	Միջին	Միջին	Միջին	Միջին	Միջինից բարձր	Միջին
Ճապոնիա	Միջինից ցածր	Միջինից բարձր	Բարձր	Միջին	Ցածր	Միջինից բարձր	Բարձր	Բարձր
Թաիլանդ	Ցաձր	Ցաձր	Ցաձր	Ցաձր	Ցածր	Բարձր	Միջինից բարձր	Բարձր
Չինաստան	Ցաձր	Ցաձր	Միջին	Ցաձր	Ցածր	Բարձր	Բարձր	Բարձր
Մալայզիա	Ցածր	Ցաձր	Ցաձր	Ցաձր	Ցածր	Բարձր	Միջինից բարձր	Բարձր
Իսրայել	Բարձր	Միջինից բարձր	Ցաձր	Ցաձր	Միջին	-	-	-